


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԵԹՎՊԻ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

« 30 » օգոստոսի 2016թ. նիստում

ՌԵԿՏՈՐ Գ. ՄՈՒՐԱՂՅԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

մասնագիտություն

ՌԵԺԻՍՈՒՐԱ

մասնագիտական կրթական ծրագիր

Ուժի մեջ է 2016-2017 ուսումնական տարվանից

Երևան, 2016թ.

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անունը

Ռեժիսուրա

2.1 ՈԱՇ մակարդակ

Ազգային որակավորումների շրջանակ, 7-րդ մակարդակ

2.2 Աստիճան / որակավորում

Արվեստի մագիստրոս

2.3 Կրեդիտների քանակը

120 կրեդիտ

3. Բուհ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

4. Ֆակուլտետ

Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետ

5. Ամբիոն

Արվեստի պատմության և տեսության ամբիոն

6. Ուսուցման լեզու

Հայերեն

7. Ուսուցման ձևը

Առկա

8. Լիցենզավորված է /
հավատարմագրված

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն

Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիզենզիա Մ N°0019, 02.04.2016թ.

(ՀՀ ԿԳՆ հրաման N°231-Ա/2, 02.04.2016թ.)

9. ԿԾ-ի մուտքի պայմաններ

Բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմ (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

Հայերենի իմացությունը պարտադիր է:

10. Ծրագրի կառուցվածքը և նկարագիրը

«Ռեժիսուրա» մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանը բաղկացած է երեք կրթամասից՝

ա/ ընդհանուր կրթամաս՝ 22 կրեդիտ,

բ/ մասնագիտական կրթամաս՝ 82 կրեդիտ, այդ թվում՝

դասավանդման մեթոդիկա և պրակտիկա՝ 28 կրեդիտ,

հետազոտական աշխատանք՝ 22 կրեդիտ,

ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզի) պատրաստում և պաշտպանություն՝ 20 կրեդիտ,

գ/ ընտրովի կրթամաս՝ 16 կրեդիտ:

Ընդհանուր կրթամասը ներառում է բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով ամրագրված դասընթացներ, որոնք նպատակաուղղված են մասնագիտական տեսությունների ու մեթոդների իմացության, ստեղծագործական-քննադատական գիտելիքի, հետազոտական կարողությունների համակողմանի ձևավորմանն ու զարգացմանը:

Մասնագիտական կրթամասը ներառում է բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով ամրագրված դասընթացներ (ուսումնական մոդուլներ), պրակտիկաներ, որոնք նպատակաուղղված են հետազոտական և մանկավարժական մասնագիտական գիտելիքների, հմտությունների ու կարողունակության ձևավորմանը, և մագիստրոսական թեզի պաշտպանություն, որի նպատակն է ուսանողի մասնագիտական ձեռքբերումների ամփոփիչ ստուգումն ու գնահատումը՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների:

Ընտրովի դասընթացների կրթամասը ներառում է բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով ամրագրված դասընթացների (ուսումնական մոդուլների) ցանկ, որը միտված է ամբողջացնելու մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու կարողունակությունը՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների:

11. Ծրագրի նպատակը

Մասնագիտական կրթական ծրագիրը, ելնելով ԵԹԿՊԻ-ի առաքելությունից,

նպատակ ունի մշակույթի և արվեստի ոլորտում պատրաստել աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետների, որոնք կնպաստեն ոլորտի առաջընթացին և զարգացմանը:

«Ռեժիսուրա» մասնագիտական կրթական ծրագիրը նպատակ ունի՝

1. ապահովել թատերական արվեստի, այդ թվում՝ ռեժիսուրայի, ինչպես նաև հարակից ոլորտների տեսությունների ու մեթոդների վերաբերյալ համակողմանի գիտելիք և իմացություն,
2. աջակցել ստեղծագործական և մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ սեփական եզրահանգումները և հետազոտության արդյունքները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը համակարգված ներկայացնելու համար,
3. զարգացնել մասնագիտական կրթական ոլորտում գործունեություն ծավալելու, բարդ խնդիրներ լուծելու և առաջադրանքներ կատարելու ունակությունը,
4. նպաստել մասնագիտական գիտելիքի, մասնագիտական գործունեության և հետազոտական աշխատանքի առաջընթացին:

12. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Գ. Գիտելիքները

Կրթական ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝

- Գ 1. հետազոտել թատերական արվեստի, այդ թվում՝ ռեժիսուրայի և մասնագիտական մանկավարժության տեսությունները,
- Գ 2. բացատրել կինոյի, գրականության, այլ արվեստների տեսությունները,
- Գ 3. մեկնաբանել արվեստի փիլիսոփայության, արվեստի հոգեբանության, արվեստի սոցիոլոգիայի, մշակույթի կառավարման տեսական և գործնական խնդիրները,
- Գ 4. համակարգել հետազոտական աշխատանքների իրականացումը:

Հմ. Հմտությունները

Կրթական ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝

- Հմ. 1. կատարել հետազոտական աշխատանք՝ օգտագործելով մասնագիտական գրականություն և սեփական ուսումնասիրության արդյունքները,
- Հմ. 2. իրականացնել մանկավարժական մեթոդական, դասախոսական գործունեություն՝ զարգացնելով մասնագիտական մանկավարժության մեթոդները,
- Հմ. 3. մշակել մասնագիտական բնագավառում (կամ միջմասնագիտական ոլորտներում) տեսական և գործնական խնդիրների լուծման տարբերակներ՝ առաջարկելով նորարարական ստեղծագործական լուծումներ,

Հմ. 4. մեկնաբանել արվեստագիտական խնդիրներ՝ համակարգված ներկայացնելով մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը:

Կ. Կարողունակությունը
(կոմպետենցիա)

- Կրթական ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝
- Կ 1. կազմակերպել գիտահետազոտական, մանկավարժական (դասախոսական), ստեղծագործական աշխատանք՝ նպաստելով մասնագիտական գիտելիքի և քաղաքացիական հասարակության զարգացմանը,
 - Կ 2. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը՝ ստանձնելով թիմի ռազմավարական նպատակների իրագործումը վերահսկելու պատասխանատվությունը,
 - Կ 3. բացահայտել սեփական կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները,
 - Կ 4. արժեվորել հայոց մշակութային ժառանգությունը՝ համամարդկային պատմամշակութային համատեքստում:

13. Գնահատման մեթոդներ

Յուրաքանչյուր դասընթացի համար ընտրված գնահատման մեթոդը հնարավորություն է տալիս առավելագույնս թափանցիկ և անկողմնակալ գնահատել ուսումնառության արդյունքը:

Գնահատման հիմնական մեթոդներն են ընթացիկ առաջադրանքների ստուգումը, գրավոր (բանավոր, գործնական) միջանկյալ և եզրափակիչ ստուգումները, ռեֆերատները, հաշվետվությունները, գրավոր աշխատանքների, նախագծերի պաշտպանությունն ու ցուցադրությունները (պրեզենտացիաները):

14. Դասավանդման և ուսումնառության մոտեցումներ

Ուսուցումն իրականացվում է ուսանողակենտրոն մոտեցման հենքի վրա: Դասավանդումն իրականացվում է հիմնականում դասախոսությունների, այդ թվում՝ ինտերակտիվ, տեսալսողական սարքավորումների, այլ միջոցների կամ համակարգերի կիրառմամբ, ինչպես նաև սեմինար/գործնական պարապմունքների ձևով:

Ուսումնառության հիմնական մեթոդներն են ստեղծագործական քննարկումները, անհատական/խմբային գործնական աշխատանքները, հետազոտական աշխատանքները:

Ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվում են ընթացիկ խորհրդատվություններ, որպես կանոն, դրանք լինում են անհատական:

Ամփոփիչ ատեստավորման նպատակով իրականացվող նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են անհատական ձևաչափով, ինչը թույլ է տալիս խթանելու ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման, համադրման և վերլուծության հարցում ուսանողի ինքնուրույնությունը և քննադատական մտածողությունը:

15. Որակավորման պահանջները, կարգերը

Արվեստի մագիստրոսի որակավորման պահանջն է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում ավարտական աշխատանքի /մագիստրոսական թեզի/ պաշտպանությունը:

Տե՛ս «ԵԹԿՊԻ-ի մագիստրոսական թեզերին և ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներ» (հաստատված է ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 30.01.2015թ. նիստում)

«Ավարտական աշխատանքների և ավարտական կիսամյակում դասընթացների կազմակերպման և անցկացման կանոնակարգ» (հաստատված է ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 30.08.2016թ. նիստում)

16. Մասնագիտական գործունեության ոլորտները

Արվեստի մագիստրոսը մասնագիտական մշակութային գործունեություն է ծավալում ստեղծագործական, մանկավարժական, հետազոտական, կառավարչական ոլորտներում՝ արվեստի, կրթական, գիտական, սոցիալ-մշակութային հաստատություններում, ՋԼՄ-ներում, այլ:

17. Հետագա ուսման հնարավորությունները

Արվեստի մագիստրոսի որակավորման աստիճանը հնարավորություն է տալիս ուսումը շարունակել կրթական հաջորդ աստիճանում՝ ասպիրանտուրայում:

«Ռեժիսուրա» ՄԿԾ-ի (մագիստրոս) ուսումնական պլանը՝
ըստ ուսումնական տարիների և կիսամյակների

| Առաջին տարի | | | | | |
|----------------------|-------|-----------|----------------------|-------|-----------|
| Աշնանային կիսամյակ | Ժամեր | Կրեդիտներ | Գարնանային կիսամյակ | Ժամեր | Կրեդիտներ |
| ընդհանուր կրթամաս | 360 | 12 | ընդհանուր կրթամաս | 120 | 4 |
| մասնագիտական կրթամաս | 360 | 12 | մասնագիտական կրթամաս | 360 | 12 |
| հետազոտական աշխատանք | 180 | 6 | հետազոտական աշխատանք | 180 | 6 |
| | | | ընտրովի կրթամաս | 240 | 8 |
| Ընդամենը | 900 | 30 | Ընդամենը | 900 | 30 |

| Երկրորդ տարի | | | | | |
|----------------------|-------|-----------|------------------------------------------------|-------|-----------|
| Աշնանային կիսամյակ | Ժամեր | Կրեդիտներ | Գարնանային կիսամյակ | Ժամեր | Կրեդիտներ |
| ընդհանուր կրթամաս | 180 | 6 | ընդհանուր կրթամաս | | |
| մասնագիտական կրթամաս | 180 | 6 | մասնագիտական կրթամաս | 300 | 10 |
| հետազոտական աշխատանք | 300 | 10 | մագիստրոսական թեզի պատրաստում և պաշտպանություն | 600 | 20 |
| ընտրովի կրթամաս | 240 | 8 | | | |
| Ընդամենը | 900 | 30 | Ընդամենը | 900 | 30 |

«Ռեժիսուրա» ՄԿԾ (մագիստրոս) ըստ դասընթացների (մոդուլների)

Ընդհանուր կրթամաս

| Առարկայի դասիչը | Դասընթաց (մոդուլ) | Կրեդիտ | Կիսամյակ |
|-----------------|-------------------------------------------|--------|-------------|
| | Օտար լեզու 1 | 2 | 1-ին աշուն |
| | Արվեստի փիլիսոփայություն | 2 | 1-ին աշուն |
| | Արվեստի սոցիոլոգիա | 2 | 1-ին աշուն |
| | Մշակույթի կառավարման ժամանակակից մեթոդներ | 2 | 1-ին աշուն |
| | Գիտահետազոտական աշխատանք | 2 | 1-ին աշուն |
| | Գրականության տեսություն | 2 | 1-ին աշուն |
| | Օտար լեզու 2 | 2 | 2-րդ գարուն |
| | Արվեստի հոգեբանություն | 2 | 2-րդ գարուն |
| | Օտար լեզու 3 | 2 | 3-րդ աշուն |
| | Մշակութաբանություն | 2 | 3-րդ աշուն |
| | Մանկավարժություն | 2 | 3-րդ աշուն |

Մասնագիտական կրթամաս

| Առարկայի դասիչը | Դասընթաց (մոդուլ) | Կրեդիտ | Կիսամյակ |
|-----------------|----------------------------------------|--------|-------------|
| | Դերասանի արվեստի տեսական հիմունքներ 1 | 2 | 1-ին աշուն |
| | Դրամայի տեսություն | 4 | 1-ին աշուն |
| | Դասավանդման մեթոդիկա և պրակտիկա 1 | 6 | 1-ին աշուն |
| | Հետազոտական աշխատանք 1 | 6 | 1-ին աշուն |
| | Դերասանի արվեստի տեսական հիմունքներ 2 | 2 | 2-րդ գարուն |
| | Կինոյի տեսություն | 4 | 2-րդ գարուն |
| | Դասավանդման մեթոդիկա և պրակտիկա 2 | 6 | 2-րդ գարուն |
| | Հետազոտական աշխատանք 2 | 6 | 2-րդ գարուն |
| | Դասավանդման մեթոդիկա և պրակտիկա 3 | 6 | 3-րդ աշուն |
| | Հետազոտական աշխատանք 3 | 10 | 3-րդ աշուն |
| | Դասավանդման մեթոդիկա և պրակտիկա 4 | 10 | 4-րդ գարուն |
| | Ավարտական աշխատանք (մագիստրոսական թեզ) | 10 | 4-րդ գարուն |
| | Մագիստրոսական թեզի պաշտպանություն | 10 | 4-րդ գարուն |

Ընտրովի կրթամաս

| | | | |
|--|----------------------|---|-------------|
| | Ընտրովի դասընթաց/ներ | 8 | 2-րդ գարուն |
| | Ընտրովի դասընթաց/ներ | 8 | 3-րդ աշուն |

«Ռեժիսուրա» (մագիստրոս) ՄԿԾ-ում վերջնարդյունքների հանդեպ կիրառվող դասավանդման/ուսումնառության և գնահատման մեթոդներ

| Գ. | Գիտելիքները | Դասավանդման/ուսումնառության մեթոդները | Գնահատման մեթոդները |
|------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Գ 1. | հետազոտել թատերական արվեստի, այդ թվում՝ ռեժիսուրայի և մասնագիտական մանկավարժության տեսությունները | դասախոսություն, գործնական աշխատանք, ստեղծագործական քննարկումներ, անհատական և խմբային առաջադրանքներ, հետազոտական աշխատանքներ | գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ), բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ) |
| Գ 2. | բացատրել կինոյի, գրականության, այլ արվեստների տեսությունները | դասախոսություն, գործնական աշխատանք, ստեղծագործական քննարկումներ, անհատական և խմբային առաջադրանքներ, հետազոտական աշխատանքներ | գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ), բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ) |
| Գ 3. | մեկնաբանել արվեստի փիլիսոփայության, արվեստի հոգեբանության, արվեստի սոցիոլոգիայի, մշակույթի կառավարման տեսական և գործնական խնդիրները | դասախոսություն, գործնական աշխատանք, ստեղծագործական քննարկումներ, անհատական և խմբային առաջադրանքներ, հետազոտական աշխատանքներ | գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ), բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ) |
| Գ 4. | համակարգել հետազոտական աշխատանքների իրականացումը | դասախոսություն, գործնական աշխատանք, ստեղծագործական քննարկումներ, անհատական և խմբային առաջադրանքներ, հետազոտական աշխատանքներ | գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ), բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ) |

| Հմ. | Հմտությունները | Դասավանդման/ ուսումնառության մեթոդները | Գնահատման մեթոդները |
|--------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Հմ. 1. | կատարել հետազոտական աշխատանք՝ օգտագործելով մասնագիտական գրականություն և սեփական ուսումնասիրության արդյունքները | դասախոսություն, գործնական աշխատանք, անհատական առաջադրանքներ, գրավոր աշխատանք, խորհրդատվություն | գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ) |
| Հմ. 2. | իրականացնել մանկավարժական մեթոդական, դասախոսական գործունեություն՝ զարգացնելով մասնագիտական մանկավարժության մեթոդները | դասախոսություն, գործնական աշխատանք, անհատական առաջադրանքներ, գրավոր աշխատանք, խորհրդատվություն | գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ), գործնական առաջադրանքների ստուգումներ |
| Հմ. 3. | մշակել մասնագիտական բնագավառում (կամ միջմասնագիտական ոլորտներում) տեսական և գործնական խնդիրների լուծման տարբերակներ՝ առաջարկելով նորարարական ստեղծագործական լուծումներ | դասախոսություն, գործնական աշխատանք, անհատական առաջադրանքներ, գրավոր աշխատանք, խորհրդատվություն | գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ) |
| Հմ. 4. | մեկնաբանել արվեստագիտական խնդիրներ՝ համակարգված ներկայացնելով մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը | դասախոսություն, գործնական աշխատանք, անհատական առաջադրանքներ, գրավոր աշխատանք, խորհրդատվություն | գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ) |
| Կ. | Կարողունակությունը (կոմպետենցիա) | Դասավանդման/ ուսումնառության մեթոդները | Գնահատման մեթոդները |
| Կ 1. | կազմակերպել գիտահետազոտական, մանկավարժական (դասախոսական), ստեղծագործական աշխատանք՝ նպաստելով մասնագիտական գիտելիքի և քաղաքացիական հասարակության զարգացմանը | խորհրդատվություն, գործնական աշխատանք, գրավոր աշխատանք, անհատական և խմբային առաջադրանքներ | ընթացիկ տեսական և գործնական առաջադրանքների ստուգումներ |

| | | | |
|------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------|
| Կ 2. | պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը ստանձնելով թիմի ռազմավարական նպատակների իրագործումը վերահսկելու պատասխանատվությունը | խորհրդատվություն, գործնական աշխատանք, գրավոր աշխատանք, անհատական և խմբային առաջադրանքներ | ընթացիկ տեսական և գործնական առաջադրանքների ստուգումներ |
| Կ 3. | բացահայտել սեփական կրթական պահանջումները և մասնագիտական զարգացման կարիքները | խորհրդատվություն, գործնական աշխատանք, գրավոր աշխատանք, անհատական առաջադրանքներ | ընթացիկ տեսական և գործնական առաջադրանքների ստուգումներ |
| Կ 4. | արժեվորել հայոց մշակութային ժառանգությունը՝ համամարդկային պատմամաշտութային համատեքստում | խորհրդատվություն, գործնական աշխատանք, գրավոր աշխատանք, անհատական և խմբային առաջադրանքներ | ընթացիկ տեսական և գործնական առաջադրանքների ստուգումներ |

«Ռեժիսուրա» ՄԿԾ-ի (մագիստրոս) բովանդակությունը՝
ըստ կրթական վերջնարդյունքների

| Դասընթացներ/մոդուլներ | Կրթական վերջնարդյունքներ | | | | | | | | | | | |
|-------------------------------------------|--------------------------|---|---|---|----------------|---|---|---|--------------------|---|---|---|
| | Գիտելիքները | | | | Հմտությունները | | | | Կարողունակությունը | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 1 | 2 | 3 | 4 | 1 | 2 | 3 | 4 |
| 1-ին տարի 1-ին կիսամյակ | | | | | | | | | | | | |
| Օտար լեզու 1 | + | | | + | + | | | + | + | | | |
| Արվեստի փիլիսոփայություն | | | + | | + | | | + | | | + | + |
| Արվեստի սոցիոլոգիա | | | + | | + | | + | | | + | + | |
| Մշակույթի կառավարման ժամանակակից մեթոդներ | | | + | | + | | + | | | + | + | |
| Գիտահետազոտական աշխատանք | | | | + | + | | | + | + | | | |
| Գրականության տեսություն | | + | | | + | | | + | + | | | |
| Դերասանի արվեստի տեսական հիմունքներ 1 | + | | | | + | + | | | + | | + | |
| Դրամայի տեսություն | + | | | | | | + | + | | | + | |
| Դասավանդման մեթոդիկա և պրակտիկա 1 | + | | | | | + | + | + | + | + | + | + |
| Հետազոտական աշխատանք 1 | + | + | | + | + | | + | + | + | + | + | + |
| 1-ին տարի 2-րդ կիսամյակ | | | | | | | | | | | | |
| Օտար լեզու 2 | + | | | + | + | | | + | + | | | |
| Արվեստի հոգեբանություն | | | + | | + | | | + | | | + | + |
| Դերասանի արվեստի տեսական հիմունքներ 2 | + | | | | + | + | | | + | | + | |
| Կինոյի տեսություն | | + | | | | | + | + | | | + | |
| Դասավանդման մեթոդիկա և պրակտիկա 2 | + | | | | | + | + | + | + | + | + | + |
| Հետազոտական աշխատանք 2 | + | + | | + | + | | + | + | + | + | + | + |
| Ընտրովի դասընթաց/ներ | + | + | | + | + | + | + | + | + | + | + | + |
| 2-րդ տարի 1-ին կիսամյակ | | | | | | | | | | | | |
| Օտար լեզու 3 | + | | | + | + | | | + | + | | | |
| Մշակութաբանություն | | | + | | | | + | + | | | | + |
| Մանկավարժություն | + | | | | | + | + | | + | + | + | |
| Դասավանդման մեթոդիկա և պրակտիկա 3 | + | | | | | + | + | + | + | + | + | + |
| Հետազոտական աշխատանք 3 | + | + | | + | + | | + | + | + | + | + | + |
| Ընտրովի դասընթաց/ներ | + | + | | + | + | + | + | + | + | + | + | + |
| 2-րդ տարի 2-րդ կիսամյակ | | | | | | | | | | | | |
| Դասավանդման մեթոդիկա և պրակտիկա 4 | + | | | | | + | + | + | + | + | + | + |
| Ավարտական աշխատանք (մագիստրոսական թեզ) | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| Մագիստրոսական թեզի պաշտպանություն | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |